



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» *թուրքի* 2021թ.

N *49-Ա*

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ,
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ, 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 9-ի N 13 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 5 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 5 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեսնիկական հսկողության լիցենզիա և թվով 1 ներդիր (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 4 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 4 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 1 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման լիցենզիայի և 1 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Մերժել 26 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության, 2 իրավաբանական անձանց քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման, 1 իրավաբանական անձի ինժեներական հետազննման համար ներկայացված լիցենզիայի և ներդիրի տրամադրման հայտերը (համաձայն հավելված 5-ի):

6. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

7/15/2021

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ